ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱԿՈԲ ՄՈՒՇԵՂԻ

ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

(ՀՀ ԶՈՒ ԿՐՏՍԵՐ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռուզաննա Համբարձումի Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Սեդրակ Աղասու Սեդրակյան**
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Զարզանդ Դավթի Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ.-ի նոյեմբերի 21-ին, ժամը՝ 12.00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023թ.-ի հոկտեմբերի 11-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Երեմի Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ ռազմական հաջողությունների հասնելու համար պահանջվում է ոչ միայն ժամանակակից սպառազինություն և ռազմական տեխնիկա, այլև կառավարման բոլոր մակարդակներում մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, որոշակի բնութագրերով օժտված հոգեպես ու ֆիզիկապես պատրաստված անձնակազմ: Գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ չկա միասնական համակարգային մոտեցում «Ծառայողական կամ ծառայողամարտական արդյունավետություն» հասկացության էության, նշանակության և գնահատման մեկնաբանությունների վերաբերյալ: Տվյալ հիմնախնդիրը դեռևս համակողմանի և խորքային ուսումնասիրության չեն ենթարկվել: Հետևաբար, արդի ժամանակաշրջանում ծառայողական գործունեության արդյունավետությունը (այսուհետ՝ ԾԳԱ) պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների բացահայտման և արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակման և ներդրման շնորհիվ հնարավոր կլինի որոշել ԾԳԱ-թյունն ապահովող չափանիշները և որակը:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ գտնվում է ռազմավարական կարևոր օղակ հանդիսացող տարածաշրջանում և համարվում է հակամարտության մեջ գտնվող երկիր: Իսկ ցանկացած ռազմավարական խնդիր հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է ունենալ բարոյահոգեբանական մթնոլորտի կայուն մակարդակ: Զինված ուժերում (այսուհետ՝ ԶՈՒ) ԾԳԱ-թյան սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ներդրումը հնարավորություն է տալու գնահատելու զինծառայողների իրականացրած մասնագիտական գործունեության արդյունավետությունը և որակը: ԶՈՒ-ում զինծառայողների ԾԳԱ-թյան գնահատման համակարգի ներդրումը հնարավորություն կտա նաև իրականացնել առաջխաղացման, կատարելագործման, ինչպես նաև խթանմանը վերաբերող հարցերը:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: ԾԳԱ-թյան գնահատման հարցերը պետությունների ԶՈՒ-երի համար առանցքային գործընթաց է, որն իրականացվել և իրականացվում է ընդհանրական ձևով, կարծիքների հիման վրա՝ առանց որևէ հստակ մեթոդաբանական հիմքի: ԾԳԱ-թյան գնահատման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների թիրախավորված ուսումնասիրությունը մեր կողմից առանձնացվել է:

Գործունեության հիմնախնդրի զարգացման մեջ մեծ ներդրում են ունեցել Կ.Ա. Աբուլխանովա-Սլավսկայի, Բ.Գ. Անանևի, Վ.Վ. Դավիդովայի, Ե.Ա. Կլիմովայի, Բ.Ֆ. Լոմովի, Վ.Դ. Շադրիկովայի, Ա.Ն. Լեոնտևի, Ս.Լ. Ռուբինշտեյնի և Ա.Բ. Բոուշլինսկու հետազոտությունները, ինչպես նաև գործունեության հիմնական մոտեցման հիմքերի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել Լ.Ս. Վիգոտսկին, Ա.Ն. Լեոնտևը, Ս.Լ. Ռուբինշտեյնը[1] և այլք:

---

[1] Лихачев Д.С., Заметки и наблюдение. Л., Советский писатель, 1989 - 608 с.

Ֆ. Գոպպեյի փորձարարական հետազոտությունները ցույց տվեցին, որ փորձի հաջո–ղությունը կամ անհաջողությունը կախված է ոչ միայն գործունեության արդյունքից, այլ նաև անձի վերաբերմունքից, թե որքանով է գործունեությունը դրսևորվում որպես անձի ինքնաարտահայտման միջոց[2]:

Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրությամբ զբաղվում են տարբեր գիտնականներ, այն համարելով առաջնահերթ՝ անձի արդյունավետ կենսա–գործունեության համար: Արդի ժամանակահատվածում հայ հոգեբանական մտքի զար–գացման համատեքստում դժվար կոնֆլիկտածին իրավիճակներում պետծառայողների փոխազդեցության հոգեբանական հիմքերի ուսումնասիրությանն անդրադարձել է Ս.Ռ. Գևորգյանը[3], կառավարչական գործունեությունում իշխանության մոտիվացիայի դրսե–վորումներին՝ Ռ.Հ. Պետրոսյանը[4], հանրային ծառայողների մասնագիտական գործունե–ության հոգեբանական առանձնահատկություններին՝ Ա.Բ. Լոքյանը[5]: Անձի կենսագործու–նեության հոգեբանական անվտանգության հիմնախնդիրներն ուսումնասիրել են Ռ.Վ. Ա–ղուզումցյանը, Ե.Բ. Մուրադյանը, Վ.Ռ. Պապոյանը, Ա.Ս. Գալստյանը, Դ.Յ. Սարգսյանը, Ծ.Ս. Ամիրյանը[6]: Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափութ–յուններին անդրադարձել, ինչպես նաև կառավարչական գործունեության առանձնահատ–կությունների հոգեբանական նկարագիրն են ներկայացրել՝ Ռ. Աղուզումցյանը, Ռ.Հ. Պետրոսյանը[7], Լ. Պետրոսյանը[8], Ս. Պողոսյանը, Ա. Խաչատրյանը: Մարտական գործու–նեության հոգեբանական հիմքերն է բնութագրել Վ.Հ. Մարգարյանը[9], ռազմական հոգեբանության հարցերը՝ Դ.Վ. Ջամալյանը[10], պետության հոգևոր անվտանգության ու դրա ապահովման հիմնախնդրին՝ Զ.Դ. Ասատրյանը[11]:

---

[2] Bertalanffy, L. V. (1951). General System Theory: A New Approach to Unity of Science (Symposium). Human Biology, 23, 303-361. (28.03.2021) https://cutt.ly/YFdqLx4

[3] Գևորգյան Ս.Ռ. Պետծառայողների փոխազդեցության հոգեբանական հիմքերը դժվար կոնֆլիկտածին իրավիճակներում: Ատենախոսության սեղմագիր: Երևան 2006:

[4] Պետրոսյան Ռ.Հ. Իշխանության մոտիվացիայի դրսևորումը կառավարչական գործառույթ–ներում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012:

[5] Լոքյան Ա.Բ. Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, ՀՀ ՊԿԱ, 2015:

[6] Աղուզումցյան Ռ., Պետրոսյան Լ., Պողոսյան Ս., Խաչատրյան Ա., Կառավարչական գործունե–ության առանձնահատկությունների հոգեբանական նկարագիր, Երևան, 2015, ՀՀ ՊԿԱ:

[7] Պետրոսյան Ռ.Հ. Ղեկավարի իշխանության դրդապատճառի դրսևորումները պայմանավորող սոցիալ-հոգեբանական որոշ գործոններ, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ, 2011:

[8] Պետրոսյան Լ.Հ. Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափությունները, Երևան, ՀՀ ՊԿԱ, 2016:

[9] Պետրոսյան Ռ.Հ. Իշխանության մոտիվացիայի դրսևորումը կառավարչական գործառույթ–ներում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012:

[10] Ջամալյան Դ.Վ. Ռազմական հոգեբանության հիմունքներ, մաս 1, Երևան, ԼԻՆԳՎԱ, 2008

[11] Ասատրյան Զ.Դ., Պետության հոգևոր անվտանգությունն ու դրա ապահովման հիմնախնդիրը, Երևան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2018:

Ընդհանուր և ռազմական հոգեբանության ոլորտում ուսումնասիրություններ են կատարել Հ. Կարայանին[12], Ա. Մասլոուն, Ա. Ադլերը, Ս. Ռուբինշտեյնը, Վ. Լեոնտևը և այլք: Սակայն, հետազոտվող թեման այս պահին սկզբունքորեն բավարար ուսումնասիրված չէ:

Կարևորելով տեսամեթոդաբանական, պատմական վերլուծությունները, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրություններով վեր հանված հանգամանքները, որոնց անդրադարձել ենք նաև մեր հետազոտության շրջանակներում, ցանկանում ենք ընդգծել, որ սույն հետազոտությունը մյուսներից տարբերվում է առանձնակի թիրախային ուղղվածությամբ, որոնցով կարևորվում է մի շարք խնդիրների առաջ քաշումը՝ դրանց լուծում տալու տեսանկյունից, հատկապես արդի զարգացումների և գործընթացների համատեքստում:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ ծառայողական գործունեության ընթացքում կրտսեր սպայական կազմի անձնային հատկությունների որոշակի համադրությունը հիմք է հանդիսանում նրանց գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակման և ներդրման համար (համառության, կազմակերպվածության, համբերատարության, հաստատակամության բարձր արտահայտվածության, ինտելեկտի և ինքնակառավարման բարձր մակարդակի, ընդհանուր հուզականության և նրա առանձին բաղադրամասերի արտահայտվածությունը նորմայում), ինչպես նաև ծառայողական գործունեության ընթացքում հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովումն ուղղակիորեն կարող է ազդել զինծառայողների ինչպես մարտական պատրաստվածության, այնպես էլ բարոյահոգեբանական վիճակի վրա:

Ուսումնասիրության նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **հետազոտական խնդիրները.**

1. Վերլուծել մասնագիտական գրականության մեջ հետազոտության հիմնախնդրին վերաբերող տեսամեթոդական և գործնական մոտեցումները:
2. Նկարագրել անձի գործունեության տեսակների, դրանց բնութագրերի տեսական հիմքերը, ինչպես նաև մասնագիտական և աշխատանքային գործունեության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:
3. Վերլուծել հայրենական և եվրոպական պետությունների ԶՈՒ-ի և զինծառայողների ծառայողական գործունեության բնութագրերը և նկարագրել զինվորական ծառայության բնութագիրը՝ տարանջատելով ԾԳԱ-թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները:
4. Բացահայտել և մեկնաբանել ՀՀ ԶՈՒ-ի կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոններն ու հստակեցնել հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովման գործոնների ազդեցությունը՝ մարտական պատրաստվածության և բարոյահոգեբանական վիճակի վրա:
5. Ընդհանրացնել ՀՀ ԶՈՒ-ում կրտսեր սպայական կազմի պաշտոնամասնագիտական գործառույթները, համադրելով վերլուծել կյանքի գործունեության այլ (հասարակական) ոլորտների հետ և առաջադրել ԾԳԱ-թյան գնահատման չափորոշիչ սանդղակներ:

---

[12] Караяни А.Г., Сыромятников И. В. Военная психология: учебник для специалистов психологической работы Вооруженных Сил Российской Федерации. – М.: ВУ, 2016:

6. Բացահայտել ծառայողական տարբեր բարդության պայմաններում ԾԳԱ-թյան մակարդակների («Բարձր արդյունավետություն», «Միջին արդյունավետություն», «Ցածր արդյունավետություն») ձևավորման հիմքում ընկած անձնային հատկությունների և կառույցների առանձնահատկությունները և վերլուծել հետազոտության արդյունքների համահարաբերակցային ցուցանիշները:
7. Մշակել ՀՈւ-ում կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյան տարբեր մակարդակների ձևավորման բնութագրերը, նախորոշված ԾԳԱ-թյան գնահատման չափորոշիչների միջոցով՝ առաջարկել գնահատման մեխանիզմներ:

Հետազոտության օբյեկտը՝ կրտսեր սպայական կազմի ծառայողական գործունեությունն է:

Հետազոտության առարկան՝ ՀՀ ՀՈւ-ում կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյան գնահատման սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն են:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը: Մեթոդաբանական հիմք են հանդիսացել երևույթների համընդհանուր կապի փոխպայմանավորվածության հոգեբանական մեկնաբանությունը, ինչպես նաև ուժային կառույցին բնորոշ մշակութային և ենթամշակութային համընդհանուր օրինաչափություններն ու սկզբունքներն՝ ըստ Լ. Ֆոն Բերտալանֆիի: Մշակած համակարգային մոտեցումը, որը հոգեբանության մեջ ներմուծել և կիրառել են Բ.Գ. Անանևը, Վ.Պ. Կուզմինը, Բ.Ֆ. Լոմովը, անձի ձևավորման և զարգացման Բ.Գ. Անանևի տեսությունը, Պ.Կ. Անոխինի կառուցվածքային-գործառութային մոտեցումը: Համալիր հետազոտությունում հաշվառվել են գործառնական, բիհևիորիստական, հումանիստական և այլ անձի վարքային դրսևորումների մեկնաբանության հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև դրդապատճառների դրսևորումների հոգեբանական իմաստավորման դրույթները (Կարայան, Ա. Մասլոու, Ա. Ադլեր և այլք):

Հետազոտության փուլերը. ելնելով ատենախոսության նպատակից և խնդիրներից՝ հետազոտությունը ներառել է մի քանի փուլեր.

1-ին փուլ. հետազոտվող խնդրի վերաբերյալ գրականության տեսական վերլուծություն,

2-րդ փուլ. հետազոտության մեթոդների ընտրություն, որին հաջորդել է նախնական փորձի միջոցով կիրառված մեթոդների հուսալիության և կիրառման արդյունավետության գնահատումը,

3-րդ փուլ. հետազոտական մեթոդների կիրառում,

4-րդ փուլ. տվյալների բազայի ստեղծում,

5-րդ փուլ. հետազորության արդյունքների համադրում և հոգեբանական վերլուծություն:

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն են. հոգեբանության և սոցիալական հոգեբանության մեջ կիրառվող ավանդական մեթոդներից՝ դիտումը, թեստավորումը, մեր կողմից փորձարկված են հարցարաններ՝ բաղկացած 60-ական հարցերից և հարցազրույցը: Առավել համալիր ուսումնասիրության նպատակով օգտագործվել են ստանդարտացված մեթոդիկաներ, որոնք կոնկրետացվել, վերացարկվել, համադրվել, դասակարգվել և համեմատվել են հետազոտությամբ ստացված քանակական և որակական տվյալների հետ, ինչպես նաև կորելացիոն պլեադա:

Աշխատանքի գիտական նորույթը:

1. Սոցիալական հոգեբանության բնագավառում, մասնավորապես՝ զինվորական կառավարման համակարգում, առաջին անգամ մշակվել է կրտսեր սպայական կազմի

ԾԳԱ-թյան գնահատման մեխանիզմ, այն է. համապատասխան թեստերի կիրառմամբ, ծառայողական գործունեության, կենսագրական (անկետային) տվյալների վերլուծությամբ՝ գնահատման չափորոշիչ սանդղակների միջոցով ԾԳԱ-թյան մակարդակի բնութագրի սահմանմամբ:

2. Բացահայտվել, հետազոտական տվյալների քանակական և որակական վերլուծությամբ ստացված արդյունքները վերլուծվել, որոշակիացվել և ապացուցվել է, որ կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյան համապատասխան մակարդակը (բարձր արդյունավետություն, միջին արդյունավետություն, ցածր արդյունավետություն) փոխպայմանավորված է որոշ անհատական, անձնային հատկությունների զարգացվածությունից:

3. Կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյունը պայմանավորող անհատական, անձնային հատկությունների ուսումնասիրությունը, հետազոտական քանակական և որակական տվյալների վերլուծությամբ ստացված արդյունքներով հստակեցվել են որոշակի համադրություններ, որոնք ձևավորում և ապահովում են ԾԳԱ-թյան համապատասխան մակարդակ:

4. ԾԳԱ-թյան գնահատման համատեքստում, վերլուծելով ծառայողամարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները, ըստ կարևորության, վեր են հանվել և ամփոփվել են՝ զինծառայողների հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովման համար առաջնային անձնային հատկությունների համախումբը:

5. Բացահայտվել և առանձնացվել է մի շարք խնդիրներ, որոնց գիտական ուսումնասիրությունը թեմայի շրջանակներում՝ հեռանկարային առումով, անհրաժեշտ է ԾԳԱ-թյան բարելավման համար:

Տեսական նշանակությունը: Համակարգային բնույթ կրող գիտափորձարարական ուսումնասիրությունների արդյունքները կարող են ընդլայնվել պետությունների ԶՈՒ-ի կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների մասին գիտելիքների շրջանակը, ինչպես նաև գիտական այլ աշխատություններում հիմնավոր կերպով տեղայնացմամբ և կիրառել մեր կողմից ներդրվող ԾԳԱ-թյան գնահատման մեթոդաբանությունը:

Գործնական նշանակությունը: Ատենախոսությունում կատարված հետազոտության արդյունքներն ու ներկայացված առաջարկները կարող են կիրառվել գործնական հետևյալ նպատակներով.

1. Պետությունների ԶՈՒ-ի կրտսեր սպայական կազմի որակավորման, առաջխաղացման, խորհրդատվական աշխատանքների իրականացման, ինչպես նաև ծառայողական գործունեության կատարելագործման գործընթացներում:

2. Պետությունների ԶՈՒ-ի սպայական կադրերի պատրաստման գործընթացում՝ ռազմաուսումնական հաստատությունների ուսումնամարտական ծրագրերում, իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ, լրացումներ՝ ժամանակակից և հարափոփոխ պատերազմների հավանական բնույթին համահունչ:

3. Պետությունների ԶՈՒ-ում հիմնավոր կերպով տեղայնացնել և կիրառել ԾԳԱ-թյան գնահատման առաջարկվող մեխանիզմը: Արդի մարտահրավերներին համահունչ, մասնագիտական անհրաժեշտ որակներով զարգացած կարողություններով և հմտություններով զինծառայողներ պատրաստելու, նրանցում անհրաժեշտ անձնային հատկութ-

յունների համախումբ ձևավորելու համար, նպատակայնորեն կիրառել հետազոտական տվյալների վերլուծությամբ ստացված արդյունքները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Անձի (զինծառայողի) գործունեությունը մարդու ակտիվության տեսակ է, որը հիմնված է շարժառիթների, նպատակադրման, գործողությունների պլանի, կոնկրետ գործողությունների կատարման վրա:

2. Անձի (զինծառայողի) զարգացման փուլում ի հայտ եկող հիմնական սոցիալ-հոգեբանական գործոնները նպաստում է գործունեության մի ձևից մյուսին անցնելուն: Գործունեության տեսակների և դասակարգման վերաբերյալ մոտեցումները տարբեր են, ուստի գործունեության հիմնական տեսակների մեջ հատուկ նշանակություն ունի աշխատանքայինը, պայմանավորված մասնագիտական ընդունակությունների դրսևորման բնույթով, մասնագիտական մոտիվացիայի կառուցվածքով ու շարժընթացով:

3. ԾԳԱ-թյան մակարդակի ձևավորման համար կարևոր նախադրյալներ են նրանց բարոյականային բարձր որակներն ու բարոյամարտական կայուն պատրաստվածությունը, արագ փոփոխվող իրավիճակի վերաբերյալ մշտական տեղեկատվական ապահովվածությունը, վտանգի նկատմամբ անհատի և կոլեկտիվի հոգեբանական կայունությունը, տարբեր դժվարությունների և արգելքների հաղթահարմանը զինծառայողի հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական պատրաստվածության անհրաժեշտ աստիճանը:

4. Զինծառայողների ԾԳԱ–թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները հանդես են գալիս անձնային հատկությունների համախմբի և անձնային կառույցների դրսևորումների առանձնահատկությունների արտահայտմամբ, մասնագիտական պատրաստվածությամբ, ինչպես նաև կյանքի այլ ոլորտներում (հասարակական) գործունեության բնույթով:

5. ԾԳԱ–թյունը պայմանավորում են հաստատակամության, համառության, կազմակերպվածության, համբերատարության, ինտելեկտի և ինքնակառավարման տարբեր մակարդակներն ու ապրումակցման, ինչպես նաև ընդհանուր հուզականության՝ նորմայում արտահայտվածությամբ:

6. Կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյունը պայմանավորված է՝ ծառայողամարտական տարբեր բարդության պայմաններում հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովվածության աստիճանից, ինչպես նաև հոգեֆիզիոլոգիական փոփոխություններից ու տեղաշարժերի բնույթից:

Հետազոտության համակազմը: Հետազոտությանը մասնակցել են՝

1. **ստուգիչ խումբ՝ n** ստուգիչ = **515,**
2. **փորձագիտական խումբ՝ n** փորձագիտական = **2300**

(որտեղ n-ը՝ հետազոտության մասնակիցների քանակական միավորն է):

Հետազոտության արդյունքները քննարկվել են ԲՈՒՀ-երում, ՌՈՒՀ-ներում, ինչպես նաև միջազգային գիտաժողովների ժամանակ:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից երկուսը՝ տեսական, մեկը՝ հետազոտական, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, առաջադրված գիտական վարկածները, տեսամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության իրականացման փուլերն ու մասնակից–ների համակազմը, հետազոտության հուսալիությունը, հավաստիությունն ու փորձաքննու–թյունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ինչպես նաև ատենախո–սական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Անձի մասնագիտական գործունեության հիմնախնդիրը» գլխի՝ 1.1. «Գործունեությունը որպես անձի ինքնաարտահայտման միջոց» ենթագլխում ներկայացված է անձի մասնագիտական գործունեությունը՝ որպես անձի ինքնաար–տահայտման միջոց: 1.2. «Գործունեության տեսակների դասակարգումը և բնութագրերը» ենթագլխում քննարկվում են մասնագիտական գրականության մեջ հետազոտության հիմնախնդրին վերաբերող տեսամեթոդական և գործնական մոտեցումները, մասնա–վորապես՝ գործունեության տեսակների դասակարգումների ու բնութագրերի վերաբերյալ: 1.3. «Մասնագիտական գործունեության առանձնահատկությունները» ենթագլխում նկարագրված են մասնագիտական գործունեության առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «ԾԳԱ-թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները» գլխի՝ 2.1. «Ծառայողական գործունեության բնութագիրը» ենթագլխում ներկայացված և նկարագրված են հայրենական և եվրոպական պետությունների ՀՈՒ-ի ծառայողական գործունեության բնութագրերը: 2.2. «ԾԳԱ-թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների տեսական հիմքերը» ենթագլխում վեր են հանվել և տարան–ջատվել են ԾԳԱ-թյունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները: Մասնա–վորապես՝ 2.3. «Զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգը զինվորական գործունեության արդյունավետության համատեքստում» ենթագլխում բացա–հայտել և մեկնաբանվել են ՀՀ ՀՈՒ-ի կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյունը պայմանա–վորող սոցիալ-հոգեբանական գործոնները և հստակեցվել են հոգեբանական, տեղե–կատվական և ֆիզիկական անվտանգության ապահովման գործոնների (Գերական անձ–նային հատկությունները) ազդեցությունը՝ մարտական պատրաստվածության և բարոյա–հոգեբանական վիճակի վրա (տես՝ աղյուսակ 1): Ընդհանրացվել են ՀՀ ՀՈՒ-ում կրտսեր սպայական կազմի պաշտոնամասնագիտական գործառույթները, համադրելով վերլուծվել են կյանքի գործունեության այլ (հասարակական) ոլորտների հետ և առաջադրվել են ԾԳԱ-թյան գնահատման չափորոշիչ սանդղակներ:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ՀՈՒ-ի կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյան սոցիալ-հոգեբանական մեխանիզմների հետազոտություն» խորագրով գլխի 3.1. «Հետազոտության մեթոդաբանությունը, ընտրակազմը և իրականացման փուլերը» ենթագլխում ներկայաց–ված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, հետազոտության իրակա–նացման ռազմավարությունը, ինչպես նաև հետազոտական տարբեր փուլերում ներգրավ–ված համակազմի քանակական ցուցանիշները, մանրազնին կերպով ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված որակական և քանա–

կական վերլուծության, փորձագիտական հարցման, հարցաթերթիկային հարցման, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունն ու անցկացման ընթացակարգը: Բացահայտվել են ծառայողական տարբեր բարդության (ծառայողամարտական և ծառա–յողական) պայմաններում ԾԳԱ-թյան մակարդակների («Բարձր արդյունավետություն», «Միջին արդյունավետություն», «Ցածր արդյունավետություն») ձևավորման հիմքում ընկած անձնային հատկություններն ու կառույցների առանձնահատկությունները և փոխկա–պակցված գործոնները ներկայացվել են կոռելյացիոն պլեադաների տեսքով (տես՝ նկար 1 և նկար 2): 3.2. «ԾԳԱ-թյան ձևավորման համահարաբերակցային ցուցանիշների հոգեբանական վերլուծություն» ենթագլխում ներկայացված են հետազոտության իրար հաջորդող փուլերում ստացված տվյալներն ու դրանց մեկնաբանությունը, համահա–րաբերակցային ցուցանիշների հոգեբանական վերլուծություն: Մշակվել են ՀՈւ-ում կրտսեր սպայական կազմի ԾԳԱ-թյան տարբեր մակարդակների ձևավորման բնութագրերը, նախորոշված ԾԳԱ-թյան գնահատման չափորոշիչների միջոցով և առաջարկվել է գնահատման մեխանիզմներ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հոգեբանական, տեղեկատվական եվ ֆիզիկական անվտանգության ոլորտի համար գերակա անձնային հատկություններ (ըստ՝ կարևորության)

Հ/Հ	Անձի հատկություններ	Հոգեբանական անվտանգության ոլորտի հատկություններ					Տեղեկատվական անվտանգության ոլորտի հատկություններ					Ֆիզիկական անվտանգության ոլորտի հատկություններ				
		(1-ը՝ նվազ կարևոր, 5-ը՝ առավել կարևոր)														
		1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5
1.	Համբերատարություն			7	18	175		2	7	36	155		3	8	16	173
2.	Հանձնառություն		6	9	14	171		2	4	28	166		6	14	21	159
3.	Կազմակերպվածություն		1	4	6	189		3	3	6	188		1	3	5	191
4.	Դիմադրողականություն		3	5	26	179		2	5	24	169		2	2	9	187
5.	Հավատարմություն			3	21	176		1	8	19	172		4	6	26	164
6.	Անշահախնդրություն		3	6	7	184		9	8	12	171		4	7	31	158
7.	Ընկալունակություն		1	4	4	191		5	7	13	175		6	8	24	162
8.	Հիշողություն		2	3	28	167		3	5	23	169		7	7	21	165
9.	Ուշադրություն			2	5	193				6	194		3	5	8	184
10.	Սառնասրտություն		4	5	14	177			12	21	178		3	6	28	163
11.	Ճարպկություն		6	9	11	174		8	11	18	163		6	7	6	181
12.	Պատասխանատվություն		1	5	6	188		4	6	14	176		1	6	11	182
13.	Աշխատասիրություն		7	8	15	172		6	7	22	165		7	8	9	176
14.	Հարմարվողականություն		2	5	4	193		3	7	9	181		4	7	5	184
15.	Մեծահոգություն		3	4	24	169		4	7	31	158		8	9	18	165
16.	Վերլուծական մտածողություն		1	3	12	184		1	4	9	186			3	29	168
17.	Հեղինամություն		5	10	18	167		5	7	32	156		4	8	16	172
18.	Ճկունություն		2	4	36	158		2	6	27	165		4	6	6	184
19.	Ինքնավստահություն		5	5	8	186		3	4	14	179		1	5	22	172
20.	Տեղյունություն		6	9	14	171		2	7	38	153		1	3	12	184
21.	Ընկերասիրություն		2	4	7	187		8	8	13	171		5	8	6	181
22.	Արտահայտիչ ունակություն		3	3	26	168		8	9	7	176			2	22	176
23.	Նպատակասլացություն		1	4	4	191		7	8	34	151			7	5	188
24.	Վճռականություն		7	3	7	189		7	8	17	168		5	6	16	173
25.	Համարձակություն		2	6	28	164		2	5	6	187		3	4	19	174
26.	Կարգապահություն		2	4	6	188		2	3	4	191		3	5	7	185
27.	Խոհեմություն		4	9	31	156		3	4	29	164		6	6	34	154
28.	Գործնական մտածելակերպ		6	8	12	174		4	6	13	177		3	4	22	171
29.	Տնտեսական մտածելակերպ		3	5	14	178		8	9	9	174		8	9	31	152

30.	Խնայողականություն		8	9	27	**156**		5	6	26	**163**		4	6	6	**184**
31.	Կամք		3	4	7	**186**		5	7	6	**182**		4	5	19	**172**
32.	Բարոյականություն		4	6	24	**166**		5	7	32	**156**		5	5	28	**162**
33.	Հեռատեսություն		6	7	16	**171**		4	4	5	**187**		2	5	19	**174**
34.	Պիվանագիտություն		5	7	13	**175**		5	7	6	**182**		5	7	11	**177**
35.	Կենսուրախություն		3	7	6	**184**		4	5	15	**176**		5	6	8	**181**
36.	Հոգատարություն		2	3	21	**174**		1	4	27	**168**		1	4	16	**179**
37.	Նախածեռնողականություն		2	7	6	**185**		9	13	22	**156**		3	5	5	**187**
38.	Անկեղծություն		4	6	11	**179**			5	7	**188**			8	27	**165**
39.	Խելացիություն		3	4	18	**175**		5	10	13	**172**			9	15	**176**
40.	Ստեղծագործականություն		1	4	23	**172**		2	6	26	**166**		3	4	12	**181**
41.	Ճիվան հմտություն		5	7	6	**182**		4	4	5	**187**		3	3	7	**187**
42.	Հուսալիություն		4	6	14	**176**		5	8	8	**179**		3	10	5	**182**
43.	Պիտողականություն		7	7	5	**181**		4	9	14	**173**			13	18	**169**
44.	Մասնագիտական վարպետություն			3	3	**194**			5	4	**191**			2	5	**193**
45.	Քաջություն			2	4	**194**			6	6	**188**			1	3	**194**
46.	Գործնականություն		3	7	7	**183**			8	28	**164**		5	5	8	**182**
47.	Ընդունողականություն		5	8	19	**168**			2	22	**176**		3	10	26	**161**
48.	Ճշտապահություն		5	7	6	**182**		4	4	5	**187**		4	9	18	**169**
49.	Հայրենասիրություն		4	5	17	**174**		5	7	12	**176**		5	8	15	**172**
50.	Նվիրվածություն		3	5	9	**183**			8	14	**178**			2	16	**182**
51.	Հանդուրժողականություն			4	4	**192**		5	8	26	**161**			8	7	**185**
52.	Կենտրոնացվածություն		3	6	15	**176**		4	5	8	**183**		7	7	5	**181**
53.	Ձևավածություն		7	9	21	**163**		3	5	33	**159**			5	26	**169**
54.	Սթափություն		4	6	16	**174**		3	8	11	**178**		7	8	14	**171**
55.	Ինքնատիրապետում			2	4	**192**		5	6	13	**176**			3	11	**186**
56.	Փոխըմբռնում		4	5	13	**178**		5	7	6	**182**		3	4	13	**180**
57.	Հավասարակշռվածություն		5	7	6	**182**			3	9	**188**		6	8	14	**172**
58.	Մանրաշնինություն			1	21	**168**			13	23	**164**			16	15	**169**
59.	Առաքինություն		2	3	24	**171**			6	21	**173**			12	16	**172**
60.	Պատրաստակամություն			9	12	**179**		3	6	15	**176**		3	10	6	**181**
61.	Կատարողականություն		4	5	8	**183**			2	11	**187**			2	9	**189**
62.	Գաղտնապահություն			3	3	**194**			2	2	**194**			2	5	**193**
63.	Հշողատվածություն			6	18	**176**		3	5	9	**183**		3	4	11	**182**
64.	Լավատեսություն			3	9	**188**			9	27	**164**			7	8	**185**
65.	Անկոտրումություն			9	12	**179**		5	7	6	**182**		4	6	13	**177**



ՆԿԱՐ 1

Մարտական հերթապահություն չիրականացնող զորամասերի 50 սպաների հետազոտական արդյունքների կոռելյացիոն պլեադա



ՆԿԱՐ 2

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի 50 սպաների հետազոտական արդյունքների կոռելյացիոն պլեադա

Հետազոտվող կրտսեր սպաների եռաստիճան հրամանատարների և ենթակաների կողմից, հարցաշարերի միջոցով ԾԳԱ-թյան գնահատման արդյունքներով դուրս է բերվել միջին թվաբանական տոկոսային տվյալներ յուրաքանչյուր չափորոշիչ-սանդղակի համար, այն իր հերթին բերվել է ընդհանուր արժեքի, որպես՝

– «Բարձր արդյունավետության» ցուցանիշ,
– «Միջին արդյունավետության» ցուցանիշ,
– «Ցածր արդյունավետության» ցուցանիշ:

ԾԳԱ-թյան հաշվարկման և գնահատման քարտում նախորոշված բանաձևերի միջոցով հաշվարկվում է.

1. Սանդղակի ընդհանուր տոկոսային արդյունքը հաշվարկվում է չափորոշիչի գումարային միավորի (ՉԳՄ) և չափորոշիչ-սանդղակի ընդհանուր գումարային միավորի (ՍԸԳՄ) բանաձևերով:
2. ԾԳԱ-թյան սանդղակների գումարային տոկոսային արդյունքը հաշվարկվում է՝ բոլոր սանդղակների (խմբի) գումարային միավորի հաշվարկման բանաձևով:

Ծառայողական գործունեության գնահատման չափորոշիչ-սանդղակի տվյալների ընդհանուր արժեքի տոկոսային տվյալը համադրվել է ցուցանիշի միջանկյալի հետ և ներ–կայացվել է որպես գնահատվողի ծառայողական գործունեության արդյունավետության բնութագիր այն ներկայացվել է՝ ըստ գնահատման ոլորտների.

1. Ընդհանուր կազմակերպչական խնդիրների իրականացում:
2. Կատարողական կարգապահության պահպանում:
3. Մարտական պատրաստության գործընթացի կազմակերպում և կառավարում:
4. Իրավախախտումների, դեպքերի և պատահարների կանխարգելում:
5. Սոցիալ-իրավական խնդիրների լուծում:
6. ՍՌՏ-ի և այլ նյութական միջոցների պահպանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձարարական հետազոտության արդյունքների և տեսական վերլուծությունների ամփոփումները հնարավորություն են տալիս կատարելու մի շարք եզրակացություններ, որոնք արվել են հետազոտական տվյալների քանակական՝ որպես հետազոտվող երևույթ–ների միջև օբյեկտիվ հարաբերություններ արտահայտող նշանների, և որակական՝ որպես փորձարկվող, կրտսեր սպաներին բնորոշիչների, վերլուծությամբ ստացված արդյունքների և հոգեբանական տեսական ուսումնասիրությունների մեթոդների զուգակցմամբ, մասնա–վորապես՝ մարտական հերթապահություն չիրականացնող և մարտական հերթապահութ–յուն իրականացնող զորամասերին հատուկ և առկա հոգեծին գործոնների կոնկրե–տացմամբ, վերացարկմամբ, համադրմամբ, դասակարգմամբ և համեմատությամբ:

Ներքոշարադրյալ մասնավոր եզրակացությունները որոշակիացվել են և բխում են ընդհանուր եզրակացություններից:

1. Մասնագիտական գրականության վերլուծությունից պարզվեց, որ մինչ այժմ միասնական մոտեցում ձևավորված չէ ԾԳԱ-թյան գնահատման հարցերի ուսումնասի–րությունների վերաբերյալ, որը հնարավորություն կտա բացահայտելու արդյունավետ գոր–ծունեության ճշգրիտ մեխանիզմները՝ հաշվի առնելով ծառայողամարտական գործունե–ության ամբողջական առանձնահատկությունները և գործունեության արդյունավետության մակարդակների ձևավորման հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական նախապայմանները: Ապացուցվեց, որ ԾԳԱ-թյունը որոշվում է՝ առաջին. որոշակի ժամանակահատվածում նպատակներին հասնելու համար ներդրվող ուժերի, միջոցների արդյունավետ կիրառումն ապահովող զինծառայողի (կրտսեր սպա) կամ զինծառայողների (կրտսեր սպայական կազմ) ընդհանուր պատրաստվածության մակարդակից: Սոցիալ-հոգեբանական տեսանկյունից փաստվեց, որ վերջինների կողմից կամ նրանց համակարգմամբ, հրաման–ներ ու հանձնարարականներ կատարելիս «Բարձր արդյունավետություն» արձանագրվում է այն դեպքերում, երբ հաշվի են առնվում մարտական հերթապահություն չիրականացնող զորամասերում ծառայություն իրականացնող ենթակա զինծառայողների հոգեվիճակների առանձնահատկություններն ու դրանց փոփոխությունների օրինաչափությունները, իսկ արտակարգ պայմաններում՝ մարտական հերթապահություն իրականացնող զորամասե–րում ծառայող ենթակա զինծառայողների հոգեծին գործոնների ազդեցության բնույթն ու դինամիկան, որոշակի գործունեությանը հարմարման ժամանակ հոգեվիճակի այն փոփոխությունների առանձնահատկությունները, որոնք կարող են սպառնալիք հանդիսա–նալ կյանքի կամ առողջության համար: Երկրորդ. զորամասերին հատուկ և առկա հոգեծին գործոնները՝ յուրաքանչյուր առանձին հրաման կամ հանձնարարական կատարելիս, և հակառակը՝ երբ առաջին և երկրորդ, կամ առաջին կամ երկրորդ նախապայմանները չեն ապահովվում:

2. Մարտական հերթապահություն չիրականացնող և իրականացնող զորամասերում ծառայող զինծառայողների հոգեկան գործընթացների խաթարումները, հոգեֆիզիոլո–գիական փոփոխությունները և այլ տեղաշարժերն անդրադառնում են գործունեության արդյունավետության մակարդակի վրա: Հետազոտությամբ ապացուցվեց, որ անձնային հատկությունների և կառույցների զարգացվածության աստիճանից և առանձնահատկութ–յուններից, ինչպես մարտական հերթապահություն չիրականացնող, այնպես էլ իրակա–

նացնող, զորամասերին հատուկ սոցիալ-հոգեբանական պայմաններից կախված՝ կրտսեր սպայի (կրտսեր սպայական կազմի) մոտ կարող է արձանագրվել հոգեվիճակների օրի–նաչափ կամ ոչ օրինաչափ փոփոխություն:

3. Հիմնավորվեց, որ ծառայողական գործունեության «Բարձր արդյունավետության» ձևավորման հիմքում ընկած են համառության՝ «Բարձր», կազմակերպվածության՝ «Բար–ձր» կամ «Միջին», հաստատակամության՝ «Բարձր» կամ «Միջին», համբերատարության՝ «Բարձր» կամ «Միջին», ինտելեկտի՝ «Բարձր» կամ «Միջին», ինքնակառավարման՝ «Բար–ձր», ընդհանուր հուզականության՝ «Բարձր» կամ «Միջին», ինչպես նաև ապրումակցման՝ «Բարձր» կամ «Միջին» արտահայտվածության մակարդակները: Ծառայողական գործու–նեության «Միջին արդյունավետության» ձևավորման հիմքում ընկած են համառության՝ «Միջին», կազմակերպվածության՝ «Միջին», հաստատակամության՝ «Բարձր» կամ «Մի–ջին», համբերատարության՝ «Միջին», ապրումակցման՝ «Միջին», ինտելեկտի՝ «Բարձր» կամ «Միջին», ինքնակառավարման՝ «Միջին», ընդհանուր հուզականության՝ «Միջին» ար–տահայտվածության մակարդակները: Ծառայողական գործունեության «Ցածր արդյունա–վետության» ձևավորման հիմքում ընկած են համառության՝ «Ցածր», կազմակերպ–վածության՝ «Միջին» կամ «Ցածր», հաստատակամության՝ «Միջին» կամ «Ցածր», համբե–ռատարության՝ «Միջին» կամ «Ցածր», ապրումակցման՝ «Միջին» կամ «Ցածր», ինտե–լեկտի՝ «Միջին» կամ «Ցածր», ինքնակառավարման՝ «Ցածր» և ընդհանուր հուզակա–նության՝ «Միջին» արտահայտվածության մակարդակները: Ընդհանուր հուզականության և նրա առանձին բաղադրամասերի նորմայում արտահայտվածությունը ուղղակիորեն ազդում է նաև հաջողության հասնելու մակարդակի վրա:

4. Մարտական հերթապահություն չիրականացնող և իրականացնող զորամասերին հատուկ և առկա հոգեծին գործոնների կոնկրետացմամբ, համադրմամբ և համեմա–տությամբ փաստվեց, որ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում ծառայող կրտսեր սպաների մոտ «Հաջողության հասնելու մակարդակ»-ն ունի բարձր ցուցանիշներ: Հաջողության հասնելու ձգտման հիմքում ընկած է ինչպես ծառայողամար–տական խնդիրների հաջողությամբ կատարումը, այնպես էլ յուրաքանչյուր փորձարկվող սպայի ձգտումը՝ ծառայողական առաջխաղացման հարցում, որն էլ իր հերթին նախա–պայման է նաև սոցիալական դիրքի և սոցիալական վիճակի բարելավման համար: Այս հանգամանքները պայմանավորված են՝ հակառակորդի հնարավոր կամ հավանական սադրիչ գործողությունների, հավանական մարտական գործողությունների բնույթի, շրջա–կա միջավայրի ու զինակիցների հետ համակեցության առանձնահատկությունների մշտական գիտակցմամբ, անձնային հատկությունների և կառույցների զարգացվածության աստիճանից և առանձնահատկություններից, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, սոցիալ-կենցաղային պայմաններով ու գործոններով: Հատկանշական է այն, որ «Հաջողության հասնելու մակարդակ»-ի առավել բարձր ցուցանիշներ ունեն այն զինծառայողները, որոնց արժեհամակարգում գերակշռում են հոգևոր արժեքները:

5. Մարտական հերթապահություն չիրականացնող և իրականացնող զորամասերում ծառայող կրտսեր սպաների մոտ արձանագրվել է ընդհանուր հուզականության, և նրա առանձին բաղադրամասերի ցուցանիշներ՝ նորմայի սահմաններում: Հաստատվեց, որ ԾԳԱ-թյունը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական գործոններով, մասնավորապես՝ փորձարկվողների կազմակերպվածության, համառության, հաստատակամության, համբե–

ռատարության և ապրումակցման դրսևորումներով: Ապրումակցման դրսևորման առավել բարձր մակարդակ արձանագրվել է մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում ծառայող կրտսեր սպաների մոտ, ի տարբերություն մարտական հերթապահություն չիրականացնող զորամասերում ծառայող կրտսեր սպաների, ինչպես նաև բարոյահոգեբանական որակական առանձնահատկություններով, որոնք էլ հանգեցրել են հաջողության հասնելու մակարդակի բարձր և շատ բարձր ցուցանիշների: Ապացուցվեց, որ նշյալ անձնային կառույցների ցուցանիշների ձևավորման հիմքում ընկած է՝ առաջին. բարոյական գործոնը, որն արտահայտվում է զինծառայողների պատրաստվածությամբ, կարողությունների ու հմտությունների աստիճանով, այսինքն՝ փորձություններին դիմակայելու ունակությամբ, հաղթանակի նկատմամբ կամքը չկորցնելու համոզումով և առաջադրված նպատակներին հասնելու ձգտումով: Երկրորդ. հոգեբանական գործոնը, որն արտահայտվում է ժամանակակից մարտի հոգեծին գործոններին զինծառայողների հոգեկանի դիմակայելու ընդունակությամբ: Հոգեբանական գործոնը նաև վկայում է, թե որքան և ինչպես է այն ազդում կրտսեր սպաների և այն կոլեկտիվների սոցիալ-հոգեբանական գործընթացների ու երևույթների փոխակերպումների, ինչպես նաև յուրաքանչյուր անդամի անձնական դրսևորումների վրա: Հոգեբանական գործոնը առավելապես բնութագրում է գիտակցության բարոյական կողմը, հոգեբանական կայունության աստիճանն ու մարտական գործողություններին զինծառայողների մասնակցության պատրաստակամությունը: Երրորդ. հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության խնդիրներով պայմանավորված բարոյահոգեբանական վիճակը, այն է՝ յուրաքանչյուր կրտսեր սպայի հոգեկանի վիճակը տվյալ ժամանակահատվածում և կոնկրետ պայմաններում, այսինքն՝ այն վիճակը, որն արտահայտվում է նրանց ծառայողամարտական ակտիվությամբ և արտակարգ իրավիճակներում սահմանված կարգով գործելու նրանց պատրաստությամբ:

6. Վերլուծելով նաև եվրոպական պետությունների ՀՈՒ-ի կադրային համալրվածության առանձնահատկությունները, ինչպես նաև զինվորական ծառայության բնութագրերն ու գրավչության սոցիալ-հոգեբանական շարժառիթները, ակներև է, որ կադրային ներգրավման ու համալրվածության վերաբերյալ ռազմաքաղաքական ղեկավարության տեսլականը հիմնականում ոչ թե հայրենասիրական նկատառումներով պայմանավորված ծառայություն իրականացնելու պատրաստակամ քաղաքացիներին ծառայության ներգրավելն է, այլ՝ վարձակալմամբ զինվորական ծառայության անցնողների ցանկության բավարարումն ու խրախուսումը: Այսպիսով, եվրոպական պետությունների ՀՈՒ-ի անձնակազմի հիմնական մասի ծառայողական մոտիվացվածությունը ունի առավելապես սոցիալական և ֆինանսական ապահովվածության պահանջմունքի բավարարման բնույթ և նպատակ: Մեր աշխատանքում, ԾԳԱ-թյան հարցերի համատեքստում, վերլուծելով զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգը, մասնավորապես՝ ծառայողամարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների տեսական հիմքերը, հետազոտական տվյալների համադրմամբ ստացված արդյունքներից եզրակացրեցինք, որ ծառայողամարտական, ծառայողական և մարտական խնդիրների հաջող իրականացման համար առաջնային նշանակություն ունի զինվորական ծառայության անվտանգության ապահովման հարցերը: Հաստատվեց, որ ծառայողական գործունեության ընթացքում հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովումն ուղղակիորեն ազդում է զինծառայողների ինչպես մարտական

պատրաստվածության ու ներուժի, այնպես էլ բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Զինծառայողների ծառայողամարտական արդյունավետ գործունեության ապահովման խնդիրներում նրանց հոգեբանական և տեղեկատվական անվտանգության հետ միաժամանակ, կարևորվում է ֆիզիկական անվտանգության հարցերը, որն ապացուցվեց անվտանգության ապահովմանն առնչվող հետազոտությամբ ստացված տվյալների հիմնավորմամբ և ըստ կարևորության ամփոփվեց՝ առաջնային անձնային 65 հատկություններում: Այսպիսով, սպառազինության և ռազմական տեխնիկայի անհրաժեշտ քանակով ապահովվածությունը և արդյունավետ կիրառումը հնարավոր է դրանց կիրառողների հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգ պայմանների ստեղծման և ապահովման դեպքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Գևորգյան Հ.Մ. Психологические причины деструктивного поведения в военном коллективе Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Միջազգային գիտաժողովի նյութեր: Հոգեբանական հիմնախնդիրները, բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները: 21-23 ապրիլ, 2019, էջ 216-223
2. Գևորգյան Հ.Մ. Նորակոչիկների՝ զինվորական ծառայությանը հարմարման սոցիալ-հոգեբանական խնդիրների փուլային դասակարգումը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Միջազգային գիտաժողովի նյութեր: Հոգեբանական հիմնախնդիրները, բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները: 21-23 ապրիլ, 2019, էջ 380-389
3. Գևորգյան Հ.Մ. Կրտսեր սպաների ծառայողական գործունեության արդյունավերության գնահատման հարցերի շուրջ ՀՀ ՊՆ Պաշտպանության Ազգային Հետազոտական Համալսարանի Ռազմական Հանդես, «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», «Հայաստանն իրավունք չունի պարտվելու և ոչ մի պատերազմում», 4 (106) 2020, էջ 102-109
4. Գևորգյան Հ.Մ. Լարված իրավիճակներում ոստիկանության աշխատողի հոգեբանական ռեսուրսների հաշվառման և գնահատման խնդիրները Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Միջազգային գիտաժողովի նյութեր: Հոգեբանական հիմնախնդիրները, բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները: 21-23 ապրիլ, 2019, էջ 375-379
5. Գևորգյան Հ.Մ. Զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգը զինվորական գործունեության արդյունավետության համատեքստում Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ 2, 2/2021, էջ 249-262
6. Գևորգյան Հ.Մ. Psychological factors determining the effectiveness of military service Khachatur Abovyan Armenian state pedagogical unversiti Main issues of pedagogy and psichology (Scintific Periodical-1), 2022, p. 45-51

ГЕВОРГЯН АКОП МУШЕГОВИЧ

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ МЕХАНИЗМЫ ОЦЕНИВАНИЯ ЭФФЕКТИВНОСТИ СЛУЖЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ (НА ПРИМЕРЕ МЛАДШЕГО ОФИЦЕРСКОГО СОСТАВА ВС РА)

Диссертация на соискание учёной степени кандидата психологических наук по специальности 19.00.03-«Социальная психология».

Защита диссертации состоится 21-го ноября 2023 года в 12 часов на заседании специализированного совета по психологии 064 ВАК-а по присуждению учёных степеней в Армянском Гасударственном педагогическом Университете имини Хачатура Абовяна по адресу: 0010, г, Ереван, ул.Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: С точки зрения сохранения и повышения уровня боеспособности ВС очень важно выявление психологических механизмов оценивания ЭСД-и. Эти проблемы научно и глубоко пока ещё не изучены. Следовательно, в нынешнее время возможно будет разработать обеспечивающие ЭСД военнослужащих и качество ЭСД стандарты благодаря выявлению обуславливающих ЭСД социально-психологических факторов, разработке и внедрению механизмов оценивания ЭСД. В этом исследовании затронуты вопросы, которые касаются повышения боеготовности армии, её мобильности и моральных качеств военнослужащих. Это постоянные, экстренные и современные проблемы. Следовательно, данное исследование уместное и очень своевре–менное. Тем более, что полученные результаты найдут своё практическое применение. Для удачного выполнения стратегической задачи необходимо иметь устойчивую морально-психологическую атмосферу. Следовательно, исследовать влияющую на деятельность офицерского состава группу факторов и разработать пути их решений.

Цель исследования - выявить основные механизмы оценивания эффективности служебной деятельности младшего офицерского состава в различных по степени сложности условиях службы.

Гипотеза исследования: Предполагается, что определённое соотношение личностных качеств младшего офицерского состава в процессе служебной деятельности являются основой для разработки и внедрения механизмов оценивания ЭСД (упрямство, организованность, терпение и стойкость, высокий уровень интеллекта и самообладания, проявления общей эмоциональности и её отдельных компонентов в пределах нормы). А также обеспечение психологической, информационной и физической безопасности в процессе служебной деятельности может напрямую влиять как на боевую готовность военнослужащего, так и на его морально-психологическое состояние.

Объект исследования - служебная деятельность младшего офицерского состава.

Предмет исследования - социально-психологические механизмы оценивания /оценки/ ЭСД младшего офицерского состава ВС РА.

Практическое значение исследования: Предложенные в диссертации итоги исследования и предоставленные предложения могут использоваться в следующих практических целях:

1. Для усовершенствования служебной деятельности и реализации квалификации младшего офицерского состава ВС разных государств.
2. В процессе подготовки офицерских кадров в учебно-боевых программах военно-учебных заведений ВС разных государств. Произвести необходимые изменения и дополнения, которые будут созвучны характерам вероятных современных войн.
3. В ВС разных государств обоснованно проинформировать и внедрить предлагаемый механизм оценивания ЭСД. Созвучно современным вызовам, для подготовки военнослужащих с необходимыми профессиональными качествами и навыками, необходимо формирование групп их личностных качеств, целенаправленно используя полученные в результате исследования данные.
4. В процессе моделирования боевой деятельности для подсчёта психологических потерь участников боевой деятельности.
5. Данные, полученные в результате исследования о социально-психологических механизмах ЭСД, могут внедриться в программу переподготовки и подготовки военнослужащих военного, оперативного и стратегического звена ВС разных государств, в учебных материалах, могут быть использованы в процессе тренировок и боевых учений.

Научная новизна исследования

1. В области социальной психологии, в частности в системе военного управления, впервые разработан механизм оценивания ЭСД младшего офицерского состава. А именно, путём использования соответствующих тестов, анализом служебной деятельности и биографических (анкетных) данных, и с помощью стандартной шкалы оценивания определения уровня ЭСД.
2. Раскрыты путём анализа количественных и количественных исследовательских данных итоги проанализированы. Определено и доказано, что соответствующий уровень ЭСД младшего офицерского состава (высокая эффективность, средняя эффективность, низкая эффективность) с уровнем развития некоторых личностных качеств.
3. Благодаря исследованию личных и личностных качеств, определяющих ЭСД младшего офицерского состава, полученных в результате анализа исследовательских количественных и качественных данных результатам стало ясно некоторое соотношение, которое формирует и поддерживает соответствующий уровень ЭСД.
4. В контексте оценивания ЭСД, проанализировав определяющие ЭСД факторы по своей важности, были подняты и подытожены группы первичных личностных качеств, которые обеспечивают психологическую, информационную и физическую безопасность военнослужащих.
5. Было обнаружены и отделены проблемы, научные исследования которых в контексте данной темы, в перспективном смысле, необходимы для улучшения ЭСД.

Структура диссертации: Диссертация состоит из введения, 3-х глав, 2 из которых теоретические, а одна исследовательская, из выводов, практических рекомендаций, списка использованной литературы и приложения.

HAKOB GEVORGYAN

SOCIO-PSYCHOLOGICAL MECHANISMS OF EVALUATING THE EFFICIENCY OF SERVICE ACTIVITIES IN THE ARMED FORCES

(On the example of the junior officers of the Armed Forces of RA)

Thesis for the degree of candidate of psychological sciences in the specialty 19.00.03 "Social psychology".

The defence of dissertation will take place on 21th of november, 2023, at 12 o'clock at a meeting of the specialized council on psychology 064 of the Higher Attestation Commission for conferring scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan at the adress: 0010, Yerevan, st. Tigran Mets 17.

ABSTRACT

Relevance: From the point of view of maintaining the combat capability of the armed forces and increasing its level, it is important to reveal the psychological mechanisms of efficiency of service activities evaluation. These issues have not yet been comprehensively, deeply and scientifically studied. Therefore, with the identification of socio-psychological factors determining efficiency of service activities in the modern era, the development and implementation of efficiency evaluation mechanisms, it will be possible to determine the criteria ensuring the effectiveness of military's activities and the quality of their activities. The issues discussed in this research, which relate to the combat ability of the army, mobility and increasing the willpower of military, are permanent, urgent and current issues. the study is relevant and timely. the obtained results will have practical significance. To carry out a successful strategic task, it is necessary to have a moral and psychological stable atmosphere. therefore, it is important to study a group of factors affecting the performance of officers and develop ways to solve the problem.

The aim of the research: The purpose of the research is to explain the main mechanisms for evaluating the effectiveness of the junior officer's activities in the complicated service conditions. (The complex of socio-psychological properties is dominant).

Hypothesis of the research: It is assumed that a certain combination of personal qualities of junior officers in the period of service is the basis for the development and implementation of mechanisms for evaluating the effectiveness of their activities (persistence, organization, patience, expressed perseverance, intelligence, self-control, general emotionality and its separate components in the norm), as well as ensuring psychological, informational and physical security during service activities can directly affect both the combat readiness and moral and psychological situation of military.

The object of the research: The object of research is the service activities of junior officers.

The subject of the research: The subject of the research is the socio-psychological mechanisms of evaluating the efficiency of the junior officers in the RA Armed Forces.

Practical significance of research: The research results and proposals presented in the dissertation can be used for the following practical purposes.

1. In the processes of qualification, promotion, consulting work of junior officers in the armed forces of the states, as well as improvement of service activities.
2. In the process of preparing the officer cadres of the armed forces of the states, in the training programs of the military educational institutions, to implement the necessary changes and additions in line with the changing conditions of modern world.
3. To thoroughly localize and apply the proposed mechanism for assessing the effectiveness of service activities in the armed forces of the states; In order to train servicemen with necessary professional abilities, qualities and skills in line with current challenges, to shape their personal qualities. purposefully apply the results of research data analysis.
4. Apply the research to calculations of psychological losses of participants in combat losses during simulation of combat operations.
5. The results of the research on the socio-psychological mechanisms of evaluating the effectiveness of the service activity can be implemented in the training programs of the strategic, operational and tactical servicemen of the armed forces of the states, in educational materials, and applied during exercises and military exercises.

The scientific innovation of the research:

1. In the field of social psychology, in particular, in the military administration system, a mechanism for evaluating the effectiveness of the service activities of junior officers was developed for the first time. This mechanism is the definition of performance evaluation characteristics through the use of appropriate tests, service activity and biographical data analysis through the evaluation standard system.
2. Based on the analysis of quantitative and qualitative results, the appropriate level of assessment of the effectiveness (high efficiency, medium efficiency, low efficiency) of service activities for the junior officers, which is determined by individual characteristics, spontaneous growth, was identified, proved and determined.
3. The study of the characteristics of service individual, personal qualities of junior officers, which is based on quantitative and qualitative research data, forms and ensures the appropriate level of efficiency of service activity.
4. In the context of evaluating the effectiveness of service activities, analyzing the socio-psychological factors determining the effectiveness of combat activities according to their importance, the group of personal characteristics for ensuring the psychological, physical and information security of servicemen was clarified and summarized.
5. Within the framework of the topic, a number of problems were identified and identified, the scientific study of which is necessary to improve service efficiency.

Dissertation structure:

The work consists of an introduction, three chapters, two of which are theoretical and next one research, as well as conclusions, practical suggestions, a list of used literature and appendices. The dissertation was printed in three copies.